Մրցույթի հայտարարություն

ՀՀ Լոռու մարզի Գեղասարի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ

տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 6-րդ կետի համաձայն՝ **ՀՀ Լոռու մարզի Գեղասարի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ –ի** կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ Լոռու մարզի Գեղասարի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ում **2021 թվականի սեպտեմբերի 23-ից հոկտեմբերի 12 -ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10 .00-ից մինչև ժամը15.00 -ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2021 թվականի հոկտեմբերի 26-ին՝ ժամը 14.00-ին,** ՀՀ Լոռու մարզի Գեղասարի միջնակարգ դպրոցում,հասցե Լոռու մարզ գ.Գեղասար 1փ.3ն. 7 շենք:

Տեղեկությունների համար դիմել Հայկանուշ Ավագյանին,094-23-72-08, Էլ. հասցե geghasar@yandex.ru: